ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ

"20" հունիսի 1996թ.

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա.Ռ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(փոփոխություն N 3)

ՀԱՅԿԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ-ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԲԱՆԿԻ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ h. 4 03.04.1996թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ h. 8 01.05.1996թ.

ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Վ.Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ք. Երևան - 1996թ.

ՀՈԴՎԱԾ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Հայկական բաժնետիրական ներմուծման-արտահանման բանկը հիմնադրվել է 1992թ. հուլիսի 24-ին՝ հիմնադիր ժողովի որոշմամբ (արձանագրություն թիվ 1), իսկ 1995թ. ապրիլի 14-ի բաժնետերերի ժողովի որոշմամբ վերածվել է բաժնետիրական բանկի արտասահմանյան կապիտալի մասնակցությամբ:

1.2 Բանկի պաշտոնական լրիվ անվանումն է՝

հայերեն՝	***Հայկական բաժնետիրական ներմուծման-արտահանման բանկ***
կրճատ՝	**ՀԱՅՆԵՐԱՐՏԲԱՆԿ**
ռուսերեն՝	***Армянский акционерный импортно-экспортный банк***
կրճատ՝	**АРМИМПЭКСБАНК**
անգլերեն՝	***Armenian Share-Holding Import Export Bank***
կրճատ՝	**ARMIMPEXBANK**

1.3 Բանկը հիմնադրվել է փակ բաժնետիրական ընկերության կարգավիճակով: Այն իրավաբանական անձ հանդիսացող ինքնուրույն տնտեսավարող ֆինանսավարկային կազմակերպություն է, որն իրավունք ունի իր անունից ներգրավելու և տեղաբաշխելու դրամա-կան միջոցներ, իրականացնելու օրենսդրությամբ նախատեսված բանկային այլ գործառնություններ:

1.4 Բանկն իրավունք ունի իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, հայցվոր և պատասխանող լինել արբիտրաժում, դատարանում, միջնորդ դատարանում:

1.5 Բանկը, որպես իրավաբանական անձ հանդիսացող փակ բաժնետիրական ընկերություն, կարող է լինել բաժնետեր այլ բանկերում, բաժնետիրական ընկերություններում:

1.6 Բանկն իր գործունեությամբ անկախ է օրենսդիր և գործադիր մարմիններից և ղեկավարվում է բանկային գործունեությունը կարգավորող՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով, ՀՀ կենտրոնական բանկի որոշումներով, ենթաօրենսդրական այլ ակտերով, սույն Կանոնադրությամբ և միջազգային բանկային նորմերով:

1.7 Պետական իշխանության և կառավարման մարմինների աշխատողները, եթե չեն հանդիսանում բանկի բաժնետեր, ապա չեն կարող մասնակցել բանկի կառավարման աշխատանքներին, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից նշանակվում են ժամանակավոր ադմինիստրացիայի կամ լուծարքային հանձնաժողովի կազմում:

1.8 Բանկը կարող է Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում հիմնել մասնաճյուղեր ու ներկայացուցչություններ:

1.9 Բանկը, որպես իրավաբանական անձ, ունի իր անվանմամբ կնիք, իր խորհրդանշանով բլանկներ և դրոշմակներ:

1.10 Բանկի իրավաբանական հասցեն է.

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Նալբանդյան 2:

ՀՈԴՎԱԾ 2. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

2.1 Բանկի գործունեության նպատակներն են՝ աջակցել ու նպաստել հիմնարկների, ձեռնարկությունների ու կազմակերպությունների՝ ներմուծման և արտահանման գործունեության ծավալմանն ու զարգացմանը, միջազգային կազմակերպությունների, համատեղ ձեռնարկությունների գործունեությանը, օտարերկրյա ներդրումների ընդլայնմանը, ձեռնարկատիրական և մասնավոր գործունեության զարգացմանը:

2.2 Բանկը կարող է իրականացնել հետևյալ գործառնությունները՝

ա) ներգրավել և տրամադրել վարկեր.

բ) ներգրավել և տեղաբաշխել դրամական ավանդներ.

գ) համախորդների և բանկերի (թղթակցող) հանձնարարությամբ կատարել հաշվարկներ.

դ) բացել և վարել համախորդների և բանկերի (թղթակցող) հաշիվներ.

ե) ներդրում կատարողների հանձնարարությամբ ֆինանսավորել կապիտալ ներդրումներ.

զ) թողարկել, գնել (սեփական միջոցների հաշվին), վաճառել և հաշվառել վճարային փաստաթղթեր և արժեթղթեր (չեկեր, ակրեդիտիվներ, մուրհակներ, բաժնետոմսեր, պարտատոմսեր և այլն).

է) երրորդ անձանց փոխարեն և նրանց հանձնարարությամբ տալ երաշխավորություններ, երաշխիքներ, ինչպես նաև ստանձնել այլ պարտավորություններ.

ը) ձեռք բերել ապրանքների մատակարարման և ծառայությունների կատարման դիմաց գումարներ պահանջելու իրավունք, իր վրա վերցնել այդպիսի պահանջների կատարման ռիսկը և իրականացնել դրանց ինկասացիան (ֆակտորինգ).

թ) գնել (սեփական միջոցների հաշվին) և վաճառել արտարժույթ.

ժ) համախորդների հանձնարարությամբ ներգրավել և տեղաբաշխել միջոցներ, կառավարել արժեթղթեր (լիզինգային գործառնություններ).

ի) իրականացնել խորհրդատվական ծառայություններ.

լ) սեփական միջոցների հաշվին ձեռք բերել և վարձակալության տալ սարքավորումներ ու մեքենաներ (լիզինգ).

խ) գնել, վաճառել և ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ ու քարեր, այլ արժեքներ.

2.3 Բանկը կարող է սույն Կանոնադրության 2.2 կետով նախատեսված գործառնությունները կատարել ինչպես Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես շրջանառության մեջ գտնվող դրամով, այնպես էլ արտարժույթով:

2.4 Բանկի՝ լիցենզավորման ենթակա բոլոր գործառնությունները կարող են իրականացվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագիր ստանալուց հետո:

2.5 Թվարկված գործառնություններից բացի, օրինական է համարվում օրենսդրությանը չհակասող այլ գործունեության կատարումը:

ՀՈԴՎԱԾ 3. ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿԻՆ, ԲԱՆԿԻ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Բանկի բաժնետերեր կարող են լինել Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք կանոնադրական կապիտալի ձևավորմանը կմասնակցեն բացառապես իրենց սեփական միջոցներով և բարեխղճորեն կկատարեն բանկի հիմնադիր փաստաթղթերով նախատեսված պարտականությունները:

3.2 Բանկի բաժնետերերի ցանկը, կանոնադրական կապիտալում նրանց ներդրումների չափն արտացոլված են կանոնադրական կապիտալի ձևավորման մասին տեղեկանքում, որը հանդիսանում է սույն Կանոնադրության անբաժանելի մասը:

3.3 Բանկի բաժնետերերն իրավունք ունեն՝

ա) մասնակցելու բանկի գործերի կառավարմանը.

բ) ստանալու բանկի գործունեությունից գոյացած շահույթի որոշակի մասը՝ իրենց պատկանող բաժնետոմսերին համապատասխան.

գ) ստանալու բանկի գործունեության վերաբերյալ տեղեկություններ, այդ թվում՝ ծանոթանալու հաշվեկշռի, հաշվետվության և այլ վիճակագրական փաստաթղթերի պատճեներին:

3.4 Բանկի բաժնետերերը պարտավոր են՝

ա) ժամանակին կատարել հայտարարված կանոնադրական կապիտալում իրենց ունեցած բաժնետոմսերի վճարումը.

բ) չհրապարակել բանկի գործունեությանն առնչվող առևտրային գաղտնիքները.

գ) կատարել հիմնադիր փաստաթղթերի դրույթները:

3.5 Բաժնետերերն իրավունք չունեն հետ պահանջելու բանկի կանոնադրական կապիտալում կատարած իրենց գույքային ներդրումները՝ ոչ բանկի գոյության և ոչ էլ նրա գործունեության դադարեցման դեպքում:

3.6 Բանկի բաժնետերերի կազմից դուրս գալու ժամանակ բաժնետերերն իրավունք ունեն ստանալու բանկի ունեցվածքի արժեքի մի մասը՝ կանոնադրական ֆոնդում իրենց ունեցած բաժնետոմսերին համապատասխան: Գույքային ներդրման դեպքում վճարվում է գույքի արժեքը՝ հաշվի առնելով դրա սկզբնական արժեքը:

3.7 Բանկի բաժնետերերի կազմից դուրս եկող բաժնետիրոջը վճարումը կատարվում է բանկի եռամսյակային հաշվետվության հաստատումից հետո՝ մեկ ամսվա ընթացքում: Դուրս եկող բաժնետերն իրավունք ունի ստանալու դուրս գալու օրվա դրությամբ իրեն հա-սանելիք շահաբաժինը:

3.8 Բանկի բաժնետերերի կազմից բաժնետիրոջ դուրս գալը իրականացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, բաժնետիրոջ դիմումի համաձայն: Բանկի կազմից դուրս գալու մասին դիմումը բաժնետերը պարտավոր է ներկայացնել ոչ ուշ, քան բաժնետերերի ժողով հրավիրվելուց մեկ ամիս առաջ:

3.9 Այն բաժնետերը, որը կանոնավոր չի կատարում հիմնադիր փաստաթղթերով նախատեսված պարտականությունները, և դրանով խոչընդոտում է բանկի գործունեությա-նը, կարող է զրկվել նոր բաժնետոմսերի, կամ չգնված բաժնետոմսերի ձեռք բերելու իրավուն-քից, կամ կարող է հեռացվել բաժնետերերի կազմից համաձայն ընդհանուր ժողովի որոշման՝ ձայների 3/4-ով:

3.10 Բանկի բաժնետերերի կազմից ըստ իր ցանկության դուրս եկած կամ բաժնետե-րերի ընդհանուր ժողովի որոշմամբ հեռացված բաժնետերը իրավունք ունի վաճառելու իր բաժնետոմսերը, ընդ որում, առաջնահերթ՝ բանկի բաժնետերերին, այնուհետև այն անձանց, որոնց Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը կցանկանա ընդգրկել բանկի բաժնետերերի կազմում, իսկ չվաճառվելու դեպքում բաժնետոմսերը գնվում են բանկի կողմից՝ անվանական արժեքով:

Բանկի կողմից անվանական արժեքով գնված բաժնետոմսերը Վարչության կողմից ենթակա են վերաբաշխման՝ 6 ամսվա ընթացքում: Եթե այդ ժամանակահատվածում վերա-բաշխում չի կատարվում, Բաժնետերերի Ընդհանուր Ժողովը կայացնում է նոր որոշում:

3.11 Բանկի բաժնետոմսերը ենթակա չեն գրավադրման: Սույն կետը խախտող բաժ-նետերը միակողմանիորեն հեռացվում է բաժնետերերի կազմից՝ ԲԸԺ-ի հետագա հաստատ-մամբ:

ՀՈԴՎԱԾ 4. ԲԱՆԿԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՖՈՆԴԸ, ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ՖՈՆԴԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ

4.1 Բանկի կանոնադրական կապիտալը հայտարարվում է 489200 հազ. դրամ: Կանոնադրական ֆոնդը բաղկացած է 12230 հասարակ, անվանական, անժամկետ բաժնե-տոմսերից, որոնց անվանական արժեքը 40000 դրամ է: Հայտարարված կապիտալը ամբողջովին համալրվում է բաժնետերերի մուծումներից:

Բանկի աշխատողները և Բանկի Խորհրդի անդամները բաժնետոմսերի նոր թողարկ-ման ժամանակ իրավունք ունեն ձեռք բերել բանկի բաժնետոմսեր, որոնց ընդհանուր քանա-կը սահմանվում է ԲԸԺ-ի կողմից, իսկ դրանց բաշխումը Բանկի աշխատողների և Խորհրդի անդամների միջև հաստատվում է Խորհրդի կողմից Վարչության ներկայացմամբ: Բանկի աշխատողների միջև բաժնետոմսերի բաշխումը հաստատվում է Բանկի Վարչության կող-մից: Բանկի Խորհրդի անդամների միջև բաժնետոմսերը բաշխվում են հավասարաչափ:

4.2 Մեկ հասարակ՝ անվանական, անժամկետ բաժնետոմսը բաժնետիրոջը տալիս է մեկ ձայնի իրավունք:

4.3 Կանոնադրական ֆոնդում ներդրումները կատարվում են Հայաստանի Հան-րապետությունում պաշտոնապես շրջանառության մեջ գտնվող դրամով:

4.4 Յուրաքանչյուր բաժնետիրոջ ներդրման չափը չի կարող գերազանցել բանկի կանոնադրական կապիտալի 35 տոկոսը, իսկ ոչ ռեզիդենտ բաժնետիրոջ՝ "Computron Industries Establishment" կազմակերպության ներդրման չափը՝ ոչ ավել քան 65 տոկոս, պահպանելով ՀՀ բանկային գործող օրենսդրության պահանջները:

4.5 Բանկը կարող է կանոնադրական ֆոնդն ավելացնել այն դեպքում, երբ թողարկ-ված բոլոր բաժնետոմսերն իրենց անվանական արժեքով լրիվ վճարված են:

4.6 Կանոնադրական ֆոնդի ավելացման մասին որոշումը կարող է ընդունվել ընդհա-նուր ժողովի կողմից:

4.7 Կանոնադրական ֆոնդի ավելացման մասին որոշումն ուժի մեջ է մտնում Կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու և ՀՀ կենտրոնական բանկում դրա գրանցման պահից:

4.8 Բաժնետոմսերի ձեռքբերումը կարող է իրականացվել միանվագ կամ տարաժամկետ վճարմամբ: Տարաժամկետ վճարմամբ ձեռք բերված բաժնետոմսերի գնորդին տրվում է ժամանակավոր վկայական, որը փոխարինվում է բաժնետոմսով ամբողջ գումարը մուծելուց հետո: Բաժնետոմսի գնորդը դրա թողարկումով պայմանավորված ձայնի իրավունքը ձեռք է բերում միայն նախատեսված ամբողջ գումարը մուծելուց հետո:

4.9 Բաժնետերը բանկի տնտեսական գործունեության համար պարտավորություն է կրում կանոնադրական ֆոնդում կատարած ներդրման չափով:

4.10 Բանկում վարվում է բաժնետերերի գրանցման մատյան: Մատյանում գրառվում են բաժնետիրոջ անվանումը, հասցեն, բաժնեմասի արժեքը, ձեռքբերման գինը և այլ տվյալներ:

4.11 Բաժնետոմսն անբաժանելի է: Այն դեպքում, երբ միևնույն բաժնետոմսը պատկանում է մի քանի անձանց, ապա նրանք բոլորը բանկի նկատմամբ համարվում են մեկ բաժնետեր և կարող են իրենց իրավունքներն իրականացնել իրենցից որևէ մեկի կամ ընդհանուր ներկայացուցչի միջոցով:

ՀՈԴՎԱԾ 5. ԲԱՆԿԻ ՖՈՆԴԵՐԸ

5.1 Կանոնադրական ֆոնդից բացի, բանկում ձևավորվում են նաև հետևյալ ֆոնդերը՝

ա) պահուստային ֆոնդ.

բ) ապահովագրական ֆոնդ.

գ) բանկի զարգացման և սոցիալական ապահովության ֆոնդ.

դ) շահութաբաժինների (դիվիդենդների) ֆոնդ.

Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ բանկում կարող են ձևավորվել այլ ֆոնդեր, համաձայն բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատված կանոնակարգի:

5.2 Պահուստային ֆոնդն ստեղծվում է հայտարարված կանոնադրական ֆոնդի 100 տոկոսի չափով: Պահուստային ֆոնդը կազմավորվում է շահույթից կատարվող եռամսյակային մասհանումների հաշվին: Մասհանումների չափը սահմանվում է շահույթի 15 տոկոսի չափով:

Պահուստային ֆոնդն օգտագործվում է բանկի ֆինանսատնտեսական գործունեությունից առաջացած հնարավոր վնասները ծածկելու և անհուսալի պարտքերը մարելու նպատակով:

5.3 Ապահովագրական ֆոնդը կազմավորվում է հայտարարված կանոնադրական ֆոնդի 50 տոկոսի չափով:

Ապահովագրական ֆոնդի կազմավորումն իրականացվում է եռամսյակային շահույթից կատարվող մասհանումներից: Մասհանումների չափը սահմանվում է շահույթի 10 տոկոսի չափով: Ապահովագրական ֆոնդն օգտագործվում է ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ռիսկն ապահովագրելու համար:

5.4 Բանկի զարգացման և սոցիալական ապահովության ֆոնդը կազմավորվում է բանկի զուտ շահույթից կատարող հատկացումների հաշվին: Ֆոնդն օգտագործվում է բանկի վերակառուցման, ընդլայնման, նյութատեխնիկական բազայի հիմնանորոգման և սոցիալական ապահովության նպատակներով:

5.5 Շահաբաժինների ֆոնդը կազմավորվում է բանկի զուտ շահույթից կատարվող մասհանումների հաշվին: Ֆոնդն օգտագործվում է բանկի գործունեության արդյունքներով հաշվարկված շահաբաժինների (դիվիդենդների) վճարման համար:

ՀՈԴՎԱԾ 6. ԲԱՆԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Բանկի վարկային ռեսուրսներն են՝

ա) կանոնադրական և մյուս ֆոնդերը.

բ) բանկի հաշիվներում ֆեոնարկությունների և կազմակերպությունների միջոցները.
գ) դեպոզիտներում ներդրավված միջոցները.
դ) ֆիզիկական անձանց ավանդները.
ե) հաշիվներում առկա միջոցները.
զ) այլ ֆինանսավարկային կազմակերպություններից գնված միջոցները.
է) գործառնական տարվա ընթացքում բանկի չբաշխված շահույթը:

ՀՈԴՎԱԾ 7. ԲԱՆԿԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

7.1 Բանկի սեփական միջոցներն են՝
ա) կանոնադրական կապիտալում բաժնետերերի կատարած ներդրումները.
բ) տնտեսական գործունեության ընթացքում ֆեոք բերված գույքը.
գ) ստացված շահույթների հաշվին ստեղծված ֆոնդերը.

7.2 Բանկն իր ունեցվածքը տնօրինում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության համաձայն: Բանկի ունեցվածքը ենթակա չէ վարչական կարգով բռնագրավման: Այն կարող է բռնագրավվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 8. ՇԱՀՈՒՅԹԸ ԵՎ ԴՐԱ ԲԱՇԽՈՒՄԸ

Պահուստային և ապահովագրական ֆոնդ կատարվող փոխանցումներից ու բյուջետային հատկացումներից հետո մնացած շահույթը (զուտ շահույթը) մնում է բանկի տրամադրության տակ: Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներով սահմանված նորմատիվներին համապատասխան՝ զուտ շահույթից համալրվում են բանկի զարգացման և սոցիալական ապահովության ֆոնդը, շահաբաժինների ֆոնդը և այլ ֆոնդեր:

Շահաբաժինը բաժնետիրոջը հասանելիք եկամտի մի մասն է՝ իր կատարած մուծման չափին համապատասխան: Շահաբաժինը բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է վճարվել եռամսյակը, կիսամյակը կամ տարին մեկ անգամ: Շահաբաժինը վճարվում է դրամով:

ՀՈԴՎԱԾ 9. ԲԱՆԿԻ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

9.1 Բանկի կառավարման բարձրագույն մարմինը բաժնետերերի ընդհանուր ժողովն է (համառոտ՝ ԲԸԺ): Այն կազմված է բանկի բոլոր բաժնետերերի կամ նրանց կողմից նշանակված և նրանց լիազորություններով գործող ներկայացուցիչներից: ԲԸԺ-ին կարող են մասնակցել բանկի Վարչության, վերստուգիչ հանձնաժողովի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

9.2 ԲԸԺ -ի իրավասությանն են վերաբերում հետևյալ հարցերը՝
ա) բանկի Կանոնադրության և Հիմնադիր պայմանագրի, ներառյալ կանոնադրական ֆոնդի փոփոխությունների կատարումը.
բ) հասարակ անվանական բաժնետոմսերի բաժնետերերի ընդունումն ու ազատումը բաժնետերերի կազմից.
գ) բանկի խորհրդի անդամների նշանակումն ու ազատումը.
դ) բանկի Վարչության նախագահի նշանակումը.
ե) տարեկան հաշվետվության, հաշվեկշռի, շահույթների և վնասների վերաբերյալ հաշվետվությունների հաստատումը.
զ) բանկի լուծարման և վերակազմավորման մասին որոշումների ընդունումը.
է) բանկի ֆոնդեր կատարվող մասհանումների նորմատիվների, ֆոնդերի կազմավորման և օգտագործման կանոնակարգերի հաստատումը.
թ) վերստուգիչ հանձնաժողովի ընտրությունը և նրա նախագահի հաստատումը.
ժ) վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունների և եզրակացությունների հաստատումը, վնասների ծածկման կարգի որոշումը.

9.3 ԲԸԺ-ն համարվում է իրավասու, եթե նրա աշխատանքներին մասնակցում է ձայնի իրավունք ունեցող բաժնետերերի կամ նրանց ներկայացուցիչների թվի 2/3-ը: Սույն հոդվածի 9.2 կետում թվարկված հարցերի վերաբերյալ ընդհանուր ժողովում որոշումներն

ընդունվում են բաժնետերերի ընդհանուր ձայների 3/4-ով: Մնացած հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

9.4 Ընդհանուր ժողով հրավիրելու մասին հայտարարությունը տրվում է ամենաուշը 30 օր առաջ, ըստ որում բաժնետերերին նախապես ուղարկվում է ժողովի օրակարգը:

9.5 Ընդհանուր ժողովը գումարվում է առնվազն տարեկան մեկ անգամ: Արտահերթ ժողովներ կարող են գումարվել ցանկացած ժամանակ՝ բանկի խորհրդի նախագահի, տեղակալի և 10 տոկոսից ավելի ձայն ունեցող բաժնետերերի պահանջով: Արտահերթ ժողով հրավիրելու մասին բաժնետերերին տեղեկացվում է ոչ ուշ, քան 10 օր առաջ:

Բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրությունները և արձանագրությունների գրքից քաղվածքները բաժնետերերի պահանջով պետք է նրանց ներկայացվեն ցանկացած ժամանակ:

9.6 Ընդհանուր ժողովում քվեարկությունը կատարվում է 4.2 կետի համաձայն՝ փաստացի վճարված բաժնետոմսը՝ 1 ձայն սկզբունքով: Բաժնետերերը, լիազորագրերի հիման վրա, կարող են իրենց ներկայացուցիչներին, այդ թվում՝ այլ բաժնետերերի հանձնարարել իրականացնելու իրենց իրավունքները: Բաժնետերը կարող է փոխել իր ներկայացուցիչներին, այդ մասին տեղյալ պահելով բանկի գործադիր մարմնին:

9.7 ԲԸԺ-ի միջև ընկած ժամանակահատվածում բանկի կառավարման բարձրագույն մարմինն է հանդիսանում բանկի խորհուրդը, որն ընդունում է բանկի զարգացման մասին ստրատեգիական որոշումներ: Բանկի խորհուրդը ընտրվում է բաժնետերերի կամ նրանց ներկայացուցիչների ընդհանուր ժողովում՝ 3 տարի ժամկետով, ձայների 3/4-ով:

9.8 Բանկի խորհուրդը բաղկացած է 9 անդամից, որոնցից մեկն՝ ի պաշտոնե Վարչության նախագահն է, մեկը՝ Բանկի կոլեկտիվի ներկայացուցիչ, երկուսը՝ ամենաշատ ձայն ունեցող բաժնետերեր, հինգը՝ ընտրվում են ԲԸԺ-ի կողմից գաղտնի քվեարկությամբ: Առևտրային բանկ հանդիսացող բաժնետերը իրավունք չունի ներկայացուցիչ ունենալ բան-կի խորհրդի կազմում:

9.9 Բանկի խորհուրդը՝

ա) ձևավորում է բանկի վարչությունը և նրա նկատմամբ իրականացնում հսկողություն.

բ) սահմանում է բանկի կառուցվածքը.

գ) նախապես քննարկում է այն բոլոր հարցերը, որոնք քննարկվելու են ԲԸԺ-ում.

դ) հաստատում է բանկի ծրագրերը և հսկողություն սահմանում դրանց կատարման նկատմամբ.

ե) ստեղծում և լուծարում է մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հաստատում դրանց կանոնադրությունները.

զ) սահմանում է բանկի զարգացման հիմնական ուղղությունները:

ը) իրավունք ունի հանելու կանոնադրական կապիտալում ոչ ռեզիդենտ բաժնետիրոջ համար սահմանված տեսակարար կշռի սահմանափակումը՝ ԲԸԺ-ի հետագա հաստատմամբ:

9.10 Բանկի խորհուրդը համարվում է իրավասու, եթե նրա աշխատանքին մասնակցում է խորհրդի անդամների ընդհանուր թվի 3/4-ը: Քվորումի բացակայության դեպքում, ներկա անդամների որոշմանբ, քննարկումը կարող է հետաձգվել, բայց երկու օրից ոչ ավել:

9.11 Խորհրդի բացակայող անդամին կարող է փոխարինել նրա գրավոր լիազորագրով օժտված անձը:

9.12 Բանկի խորհրդի նիստերին և նրա աշխատանքներին՝ խորհրդակցային ձայնի իրավունքով, կարող են մասնակցել բանկի վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամները:

9.13 Բանկի խորհուրդը հրավիրվում է տարեկան առնվազն 4 անգամ: Հրավիրման ժամկետները և տեղը որոշում է խորհրդի նախագահը, նրա բացակայության դեպքում՝ տեղակալը:

9.14 Բանկի խորհրդի արտահերթ նիստերը հրավիրվում են խորհրդի նախագահի, տեղակալի, բանկի վարչության նախագահի, վերստուգիչ հանձնաժողովի կամ խորհրդի առնվազն 4 անդամի պահանջով:

9.15 Խորհրդի քարտուղարը բանկի խորհրդի հրավիրման տեղի, ժամկետի մասին ոչ ուշ, քան 7 օր առաջ առկա կապի միջոցներով տեղյակ է պահում խորհրդի անդամներին:

9.16 Խորհրդի որոշումներն ընդունվում են ներկաների պարզ մեծամասնությամբ: Եթե խորհրդի նախագահը գտնում է, որ բացառապես խորհրդի իրավասությանը ենթակա

քննարկվելիք հարցի առնչությամբ խորհրդի նիստի հրավիրման անհրաժեշտություն չկա, ապա այն քննարկվում է հարցման միջոցով:

9.17 Բանկի գործադիր մարմինն է բանկի վարչությունը:

Վարչությունը նշանակվում է բանկի խորհրդի կողմից՝ 3 տարի ժամկետով:

Վարչությունը ղեկավարում է Վարչության նախագահը, որն ունի բանկի խորհրդի կողմից՝ 3 տարի ժամկետով նշանակված տեղակալներ:

9.18 Վարչության նախագահը և նրա տեղակալները գործում են առանց լիազորագրերի և ներկայացնում են բանկի շահերը երրորդ անձանց, դատարանի և այլ կազմակերպությունների առջև, ինչպես նաև իրականացնում են բանկի գործունեության հետ կապված՝ գործող օրենսդրությանը չհակասող այլ գործողություններ:

9.19 Բանկի Վարչությունը և Վարչության նախագահն իրականացնում են բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումը՝

ապահովում են ֆեռնարկության ընթացիկ և հեռանկարային ծրագրերի կատարումը,

տնօրինում են բանկի ունեցվածքը (ներառյալ դրամական միջոցները),

քննարկում և հաստատում են բանկի ընթացիկ և հեռանկարային գործունեությունը կարգավորող նորմատիվ փաստաթղթերը,

աշխատանքի են ընդունում և ազատում բանկի անձնակազմին, սահմանում աշխատավարձի դրույքները և հաստիքացուցակը,

բանկի անունից կնքում են պայմանագրեր և ապահովում դրանց կատարումը,

իրականացնում են այլ գործողություններ, որոնք հանդիսանում են գործադիր մարմնի իրավունքներն ու պարտականությունները:

Բանկի Վարչության և Վարչության նախագահի իրավասության շրջանակները կանոնակարգվում են բանկի գործունեությունը կարգավորող նորմատիվ փաստաթղթերով:

ՀՈԴՎԱԾ 10. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

10.1 Բանկի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունն իրականացնում է վերստուգիչ հանձնաժողովը, որը կազմված է 3 անձից: Վերստուգիչ հանձնաժողովի կազմն ընտրվում է ԲԸԺ-ի կողմից՝ երկու տարի ժամկետով: Վերստուգիչ հանձնաժողովի անդամ չեն կարող լինել բանկի խորհրդի կամ բանկի վարչության անդամները, ինչպես նաև բանկի ղեկավար աշխատողները: Վերստուգիչ հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնելու համար կարող է ներգրավել բանկի այլ աշխատակիցների:

10.2 Վերստուգիչ հանձնաժողովի անդամները խորհրդակցային ձայնի իրավունքով կարող են մասնակցել ԲԸԺ-ի հորհրդի նիստերին:

10.3 Վերստուգիչ հանձնաժողովն ստուգման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացնում է ժողովին կամ բանկի խորհրդին: Այն կազմում է տարեկան հաշվետվությունների և հաշվեկշիռների վերաբերյալ եզրակացություններ:

10.4 Վերստուգման արդյունքներից ելնելով՝ վերստուգիչ հանձնաժողովն իրավունք ունի առաջարկություն ներկայացնելու բանկի խորհրդին, արտահերթ ԲԸԺ հրավիրելու մասին:

10.5 Վերստուգիչ հանձնաժողովն ստուգումներն իրականացնում է՝

ա) ԲԸԺ-ի հանձնարարությամբ.

բ) սեփական նախաձեռնությամբ.

գ) 15 տոկոսից ավելի ֆայներ ունեցող բաժնետերերի պահանջով.

դ) բանկի խորհրդի հանձնարարությամբ:

Ստուգումները կատարվում են առնվազն տարեկան մեկ անգամ:

10.6 Առանց վերստուգիչ հանձնաժողովի եզրակացությունների, բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք չունի հաստատելու բանկի հաշվեկշիռը:

ՀՈԴՎԱԾ 11. ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿՈՒՄ

Բանկի ֆինանսական տարին սահմանվում է հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը: Հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը բանկում տարվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով և ժամկետներում: Բանկի գործունեության արդյունքներն արտացոլում են ամսական, եռամսյակային և տարեկան հաշվեկշիռներում, շահույթի և

վնասների վերաբերյալ հաշվետվություններում, ինչպես նաև տարեկան հաշվետվության մեջ: Հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո՝ բանկը ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված ձևով երեք ամսվա ընթացքում կազմում և հրապարակում է կիսամյակային ու տարեկան հաշվետվությունները: Բանկի տարեկան հաշվետվությունը ստուգվում և հաստատվում է աուդիտորական կազմակերպության կողմից:

ՀՈԴՎԱԾ 12. ԲԱՆԿԻ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ

12.1 Բանկը լուծարվում է հետևյալ դեպքերում՝

ա) ԲԸԺ-ի որոշմամբ.

բ) օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքերով:

12.2 Բանկի լուծարումը կատարում է լուծարքային հանձնաժողովը: Բանկի կամավոր լուծարման դեպքում լուծարքային հանձնաժողովը նշանակվում է բանկի, իսկ հարկադրական լուծարման դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

12.3 Բանկի վերակազմավորումը տեղի է ունենում հիմնադիր փաստաթղթերի փոփոխման և դրանք ՀՀ կենտրոնական բանկում գրանցելու միջոցով:

12.4 Լուծարքային հանձնաժողով նշանակելու պահից նրան են անցնում բանկի գործերի կառավարման բոլոր լիազորությունները:

Լուծարքային հանձնաժողովը գնահատում է բանկի ունեցվածքի արժեքը, պարզում է պարտապաններին, վարկավորողներին, հաշվարկներ կատարում նրանց հետ, կազմում է լուծարման հաշվեկշիռ և ներկայացնում կառավարման բարձրագույն մարմին:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով պարտավորությունների կատարումն իրականացնելուց հետո, մնացած միջոցները բաշխվում են բաժնետերերի միջև՝ բանկի կանոնադրական ֆոնդում ունեցած բաժնեմասերին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 13. ՎԻՃԵԼԻ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Բանկի գործունեության ընթացքում կազմակերպությունների, ձեռնարկությունների, ֆիզիկական անձանց հետ ծագած վեճերը լուծվում են գործող օրենսդրությանը համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 14. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Կանոնադրությունը կազմված է 3 օրինակից:

Կանոնադրությունն ուժի մեջ է մտնում ՀՀ կենտրոնական բանկում գրանցվելու պահից:

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝ **Է.Մ. ԱՐԱԲԽԱՆՅԱՆ**